Մամլոյ Յաղորդագրութիւն

Կազմակերպութեամբ Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի և Գերմանահայ Գործարարների Միութեան, սոյն թուի Դեկտեմբեր 6ին Գերմանիոյ Դաշնութեան Քյոլն քաղաքում տեղի ունեցաւ հայոց ցեղասպանութեան 100րդ տարելիցի ոգեկոչման միջոցառումների իրագործման համար դրամահաւաք: Երեկոյին ներկայ էին Քյոլն քաղաքի քաղաքապետը, Գերմանիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչը, Գերմանիայում Հայաստանի հանրապետութեան Պատուոյ հիւպատոսը, Գերմանահայոց Թեմի առաջնորդը, փոխ-առաջնորդը, ինչպէս նաև համայնքում գործող մի շարք կազմակերպութիւնների և միութիւնների ներկայացուցիչներ և հրաւիրեալներ:

Օրուայ հաղորդահավարն էին Գերմանահայոց Կենտրոնական Խորհրդի Վարչութեան անդմաներ Տիկ Վեհանոյշ Դաւթեան-Այնթապլեանը և Տիկ. Մաղլեն Վարդեանը, որոնք պատշաճ կերպով ներկայացրեցին օրուայ խորհուրդը: Ողջոյնի խօսքից յետոյ բեմ հրաւիրուեցին Քյոլնի քաղաքապետը ապա Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչը որն իր խօսքից յետոյ ընթերցեց Հ Հ Սփիւռքի Նախարարուհու խօսքը: Նախարարութեան ուղերձում գնահատելով կազմակերպիչների աշխատանքը նշուած էր՝.

«Այսօր մենք ականատեսն ենք, թէ ինչպէս է օրէցօր զարգանում և թափ առնում Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստական աշխատանքները հայկական բոլոր համայնքներում: Ուրախ եմ որ գերմանհայ համայնքը նոյնպէս ակտիւօրէն ներգրաւուել է այս համազգային շարժմանը և իր միջոցներն ու հնարաւորութիւններն է ներդնում Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման միջոցառումները պատշաճ կերպով կազմակերպելու գործում:

Չեմ կասկածում, որ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախաշէմին գերմանահայ համայնքում ստեղծուած յանձնախումբը պէտք է համակարգի տեղական ձեռնարկները, ինչպէս նաև դրանց համահայկական շարժման մասն ամէնուր՝ ամէն տեղ առաջնորդուելով «Յիշո՛ւմ եմ և պահանջում» կարգախօսով:

Լիայոյս եմ, որ բոլորդ 2015 թ. Ապրիլեան միջոցառումներին նոյնքան միասնական և ակտիւ կը գործէք յանձնախմբի հե համատեղ և մեր նահատակների յիշատակի կոչման արարողութիւններին մասնակից կը դարձնէք նաև Գերմանիայի հասարակական-քաղաքական շրջանակները ներկայացնող անուանի ու բարձրաստիճան գործիչների»:

Օրուայ մշակութային բաժնին մաս էին կազմում յայտնի Օպերայի մենակատար՝ Հրաչուհի Բազենցը որին ընկերակցում էր դաշնակահարուհի Լօլիթա Պողոսեանը: Սոյն բաժնում

Vorsitzender	Bankverbindung	Stellvertretende Vorsitzende	Madlen Vartian
Dr. Nazareth Agheguian	Sparkasse Leverkusen	Kassenwart	Samwel Lulukyan
Tel: +49 (0) 1747886114	IBAN: DE12375514400118365543	Schriftführerin	Tamar Hamouchian
Nazareth.Agheguian@t-online.de	BIC: WELADEDLLEV	Jugendbeauftragte	Vehanoush Davoodian

մաս կազմեցին նաև սաքսաֆոնահար Հայրապետ Առաքելեանը , դաշնակահարուհի Սօնա Բարսեղեանի ընկերակցութեամբ: Միջոցառումը ճոխացրեցին Հոլանտայից հրաւրիրուած Երուանդ Փափազեանը իր նուագախումբով:

Երեկոն ընթացաւ ջերմ և մտերմիկ մթնոլորտում գոյացնելով գուհացուցիչ արդիւնք: Ներկաներից իւրաքանչիւրը իր լուման ներդրեց երեկոն իր լաւագոյն արդիւնքին հասացնելու նպատակին:

Գերմանահայոց Կենտրոնական Խորհուրդը լիայոյս է որ երեկոյից գոյացուած հասոյթով հնարաւորութիւն է ունենալու պատշաճօրէն նշելու Հայոց Ցեղասպանութեան 100ամեակի միջոցառումները:

ԳԿԽ-ի Վարչութիւն

Ֆրանկֆուրտ, 12.12.2014

Vorsitzender	**Bankverbindung**	**Stellvertretende Vorsitzende**	Madlen Vartian
Dr. Nazareth Agheguian	Sparkasse Leverkusen	**Kassenwart**	Samwel Lulukyan
Tel: +49 (0) 1747886114	IBAN: DE12375514400118365543	**Schriftführerin**	Tamar Hamouchian
Nazareth.Agheguian@t-online.de	BIC: WELADEDLLEV	**Jugendbeauftragte**	Vehanoush Davoodian